

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության կողմից Տավուշի շրջանի , Չինարի գյուղի մանկապարտեզի եւ պարի դպրոցի վերանորոգման, կահավորման, ջեռուցման եւ ջրամատակարարման աշխատանքների վերաբերյալ

«Երկիր» միությունը 2004թ. թ. ապրիլից սկսեց իրագործել Չինարի գյուղի մանկապարտեզի եւ պարի դպրոցի վերանորոգման, կահավորման, ջեռուցման եւ ջրամատակարարման աշխատանքները, որոնք ավարտվել են նույն թվականի օգոստոս ամսին, մանկապարտեզը եւ պարի դպրոցը հանձնվել են շահագործման: Ստորել ներկայացնում ենք տեղեկություններ կատարված աշխատանքների եւ իրականացված ծախսերի վերաբերյալ՝

#### Կատարվել են հետեւյալ աշխատանքները՝

Վերանորոգվել են մանկապարտեզի, ճաշարանի եւ պարի դպրոցի տարածքները

Կազմակերպվել է շենքի ջրամատակարարումը

Իրականացվել են սանհանգույցների վերանորոգման աշխատանքները

Ձեռք է բերվել եւ տեղադրվել կահույք

Կազմակերպվել է ջեռուցման համակարգի աշխատանքը

Նկարահանվել է վավերագրական ֆիլմ

Չինարի գյուղապետարանի պահանջով եւ հովանավորների համաձայնությամբ ծրագրի

շրջանակներից դուրս կատարվել են հետեւյալ աշխատանքները՝

Շենքի մանրահատակի վերանորոգման աշխատանքներ

Շենքի պատուհանների ապակիների վերականգնում

Շենքի տանիքի ջրահեռացման աշխատանքներ

N	Կատարված աշխատանքների եւ իրականացված ծախսերի ուղղությունը	Գումար
1	Շինարարարության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	\$ 3 859,00
2	Շինարարական աշխատանքներ	\$ 2 680,00
3	Տեղափոխման եւ տրանսպորտային ծախսեր	\$ 570,00
4	Ներքին կահավորման ծախսեր	\$ 3 037,00
5	Վավերագրական ֆիլմի ծախսեր	\$ 167,00
6	Բանկային ծախսեր կանխիկացման համար /ընդհանուր գումարի 0,5 %/	\$ 50,00
<b>Ընդամենը</b>		<b>\$ 10 363,00</b>

Հովանավորի կողմից տրամադրվել է 9 890 \$

«Երկիր» Միության կողմից ծախսվել է 10 363 \$

Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման նպատակով լրացուցիչ ծախսվել է 473 \$